# «Ոչ լեգիտիմ իշխանությունները չեն կարող Ղարաբաղի հարցում հասնել լուրջ եւ ցավալի փոխզիջումների»

Սկիզբը էջ 1

Բաքվում շարունակվում են բռնությունները, ոստիկանությունը Իսա Գամբարի կողմնակիցներին սաստելու նպատակով դիմում է բիրտ միջոցների՝ օգտագործելով մահակներ, արցունքաբեր գազ:

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը շնորհավորել է Իլհամ Ալիեւի ընտրությունը նախագահի պաշտոնում:

Համաձայն ՌԴ նախագահի մամլո ծառայության, Պուտինը















շնորհավորական ուղերձում ասել է. «Ընտրություններում ձեր համոզիչ հաղթանակը ցույց տվեց, որ Ադրբեջանի ժողովուրդը սատարում է երկրի զարգացման եւ արտաքին քաղաքական կողմնորոշման ձեր որդեգրած կուրսը»:

«Ընտրություններում հաղթել եմ ես: Այն տեղամասերում, որտեղ եղել են միջազգային դիտորդներ, հաշվումները ցույց են տալիս, որ իմ օգտին քվեարկել է ընտրողների 60-80 տոկոսը», հայտարարել է Իսա Գամբարը:

Վրացական առաջատար բոլոր հեռուստաընկերությունները, որոնց թղթակիցները կես ժամը մեկ ուղիղ եթեր են մտնում, գրեթե առանց մեկնաբանությունների ցուցադրում են Բաքվի փողոցներում շարունակվող բռնությունները: Ոստիկանության ուժերի եւ մուսավաթականների բախումների ընթացքում մի քանի տասնյակ մարդ, այդ թվում 13 ոստիկան, տարբեր աստիճանների վնասվածքներ են ստացել: Բաքվի ոստիկանությունն «անզգուշորեն» ծեծել է նաեւ միջազգային դիտորդների, ընդ որում ընտրատեղամասերում: Համընդհանուր ծեծից բաժին է հասել նաեւ ադրբեջանցի լրագրողներին:

Ադրբեջանի նորընտիր նախագահ Իլհամ Ալիեւն ընտրություններից առաջ հայտարարել էր, որ ղարաբաղյան հարցի կարգավորման բանակցություններում ինքը շարունակելու է հոր՝ Հեյդար Ալիեւի կիսատ թողած գործը:

**«Ազգը»** հեռախոսազրույցներով ադրբեջանցի քաղաքական վերլուծաբաններից փորձեց պարզել, թե ինչպիսի անդրադարձ կունենան Ադրբեջանի նախագահական ընտրությունները ղարաբաղյան կարգավորման խաղաղ գործընթացի վրա:

Ադրբեջանում հայտնի քաղաքական վերլուծաբան Ռասիմ Մուսաբեկովը մեզ հետ զրույցում նշեց, որ եւ Հայաստանում, եւ Ադրբեջանում նախագահական ընտրությունները կեղծվել են, եւ «ոչ լեգիտիմ իշխանությունները չեն կարող Ղարաբաղի հարցում հասնել լուրջ եւ ցավալի փոխզիջումների»:

Ըստ Մուսաբեկովի, իշխանությունը բռնի ուժով զավթած իշխանությունները, չունենալով ժողովրդի աջակցությունը, չեն կարող այլ բան անել, քան ցույց տալ, թե փորձում են Ղարաբաղի հարցը լուծել:

«Ռոբերտ Քոչարյանը եւ Իլհամ Ալիեւը շարունակելու են հարցի խաղաղ կարգավորման իմիտացիան ճիշտ այնպես, ինչպես էր Հեյդար Ալիեւի ժամանակ», ասաց Մուսաբեկովը:

Հ. Ալիեւի նախկին օգնականներից Էլդար Նամազովը նշեց, որ ԵԱՀԿ-ը եւ Եվրախորհուրդը Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահական ընտրությունները ճանաչում են ոչ ժողովրդավարական, ինչը «բացասաբար կանդրադառնա ԼՂ խնդրի կարգավորման վրա»:

«Եթե անգամ Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահները կարողանան ԼՂ հարցում հասնել ինչ-որ փոխզիջման, ապա դա կյանքի կոչելը գրեթե կլինի անհնար, քանի որ Ի. Ալիեւը եւ Ռ. Քոչարյանը չեն վայելում իրենց պետությունների ժողովրդի աջակցությունը, հետեւաբար՝ նրանք չեն կարող ժողովրդին բացատրել, թե ինչու է պետք գնալ փոխզիջման», ասաց Նամազովը:

Նա նաեւ նկատեց, որ եւ Հայաստանում, եւ Ադրբեջանում ներքաղաքական իրավիճակը կշիկանա, երբ նախագահները փորձեն որեւէ փոխզիջման հասնել, քանի որ ընդդիմությունը դա կշահարկի եւ ժողովրդին կհամոզի, որ «անօրինական իշխանությունները դավաճանում են երկրի ազգային շահերին»:

Ընտրությունների նախօրեին **«Ազգը»** կապվել էր Բաքվի հետ եւ Իսա Գամբարից ճշտել, թե նախագահ ընտրվելու դեպքում ի՞նչ քաղաքականություն կորդեգրի ԼՂ հարցում:

«Նախագահ ընտրվելու դեպքում ես կփորձեմ խաղաղ ճանապարհով կարգավորել խնդիրը, այլ ոչ թե (Ադրբեջանի եւ Հայաստանի) իշխանությունների օրինակով իբր հարցը խաղաղ ճանապարհով կարգավորելու իմիտացիա կստեղծեմ», ասել էր Գամբարը:

Առայժմ տեղեկություններ չկան, թե որդու ընտրությանն ինչպես է արձագանքել ենթադրաբար Քլիվլենդի կլինիկայում ապաքինվող Հեյդար Ալիեւը:



## Թուրքական ինքնաթիռ «Զվարթնոց»-ում

### *Թուրքիան դրանով Հայաստանի առջեւ բացում է իր օդային տարածքը*

Հակառակ Ադրբեջանի նախագահական ընտրությունների անցկացման փաստին եւ դրանց նկատմամբ Թուրքիայի հետաքրքրություններին, թուրքական «Աքշամ» թերթը նոյեմբերի 16-ի համարում որպես լուսանցքային լուր տեղ է հատկացրել Ստամբուլից Երեւան կատարված չարտերային չվերթին: «Եվ այսպես հայաստանյան սահմանադուռն օդում բացվեց» խորագրով Գյուլեր Քյոմուրջու ստորագրությամբ հոդվածում «Աքշամը» գրում է. «Այսօր չափազանց կարեւոր օր է: Անձամբ ականատես եմ լինելու պատմական իրողությանը: Քիչ թվով լրագրողների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ թուրքական դրոշով զարդարված ինքնաթիռով Ստամբուլից թռչում ենք Երեւան: Երեկոյան Երեւանում Հայաստանի պաշտոնական պատվիրակության հետ «Աղրի», կներեք, նրանց արտահայտությամբ «Արարատ» հյուրանոցում, մասնակցելու ենք «սահմանադուռն օդում բացելու» հանդիսավոր արարողությանը:

Թղթակցուհին վերոհիշյալ չվերթի առնչությամբ հարկ է համարում հիշեցնել հետեւյալը.

1. Թուրքիան, որ տարիներ շարունակ իր դռները փակ է պահում Հայաստանի առջեւ, 2003 թ. նոյեմբերի 16-ին բացեց երկրի օդային տարածքը: Ներկայումս օրակարգում «ցամաքում սահմանադուռ բացելու» հարցն է: Ստացած տեղեկությունների համաձայն, «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության կառավարությունը պատրաստվում է նաեւ դա բացել:

2. Երկար տարիներ անց վերջապես Երեւանի օդանավակայանում վայրէջք է կատարում թուրքական դրոշով զարդարված ինքնաթիռը՝ դրանով սկսվում են Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ շաբաթը երկու անգամ նախատեսվող փոխադարձ թռիչքները: Այս «խորհմաստ» թռիչքներն իրականացնում է թուրքական մասնավոր ավիաընկերությունը, որը եվրոպա կատարած չարտերային չվերթներով հայտնի «Ֆլայեր» ընկերությունն է: Հայաստանի առջեւ օդային տարածքի բացմանն իր լոբբիստական գործունեությամբ մեծապես նպաստել է Եվրասիական միությունը:

3. Օդային տարածքի բացմանը եւ չվերթի կազմակերպմանը նպաստած միությունը ղեկավարում է Շուլե Քըլըչարսլանը: Տիկին Շուլեն մեկ տարի առաջ, որպես «Թուրք-հայ երիտասարդ կանանց խմբի» ներկայացուցիչ, Երեւանում կազմակերպել էր կանանց միջազգային օրվա հանդիսությունները:

4. Եվրասիական միությունը, տկն Շուլեի բնութագրմամբ, ոչ միայն կենտրոնանում է Հայաստան-Թուրքիա հարաբերությունների վրա, այլեւ մշակում է տարածաշրջանային քաղաքականության ռազմավարությունը: Միության խորհրդատվական խորհրդի կազմում են Ալեն Մակովսկին, Պոլ Միչել Ուիբին, Դեւիդ Ֆիլիպսը, Սամսոն Օզարարատը, Նեջդեթ Փամիրը (էներգետիկայի մասնագետ), Մահմութ Քոչաքը (Մեջլիսի պատգամավոր), ինչպես նաեւ մի շարք նախկին դեսպաններ, համալսարանի դասախոսներ: Տկն Շուլեն միաժամանակ «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության Ստամբուլի քաղաքային վարչության անդամ է:

5. Վերջում կարեւոր մի հանգամանք: Հայաստանի առջեւ թուրքական սահմանի բացումը օդային տարածքի բացումով սկսելու առաջարկը մեր մեծ եղբայրն է արել: Ավելին՝ այդ մասին դեռեւս հուլիսի 21-ին Վաշինգտոն կատարած այցի ընթացքում «բացահայտ» տեղեկացրել է արտգործնախարար Աբդուլլահ Գյուլին:

Երեկ ուշ երեկոյան վերոհիշյալ ինքնաթիռը «Զվարթնոց» օդանավակայանում վայրէջք է կատարել: Թուրքիայից Երեւան ժամանած լրագրողների թվում են պոլսահայ «Մարմարա» թերթի խմբագիր Մաքրուհի Հակոբյանը եւ «Ժամանակ» թերթի գլխավոր խմբագիր Արա Քոչը: Ստացած տեղեկություններով, չվերթի բացումն անմիջականորեն նախաձեռնել է մեր ազգակից Տիգրան Ալքընը:

Հ. Չ.

